

Կառավարելի վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում պլանային պատվաստումների միջոցով կանխարգելվող վարակիչ հիվանդություններն են՝ դիֆթերիա, կապույտ հազ, փայտացում, կարմրուկ, կարմրախտ, համաճարակային պարոտիտ (խոզուկ), պոլիոմիելիտ, հեպատիտներ «Ա» և «Բ», տուբերկուլոզ, հեմոֆիլոսային Բ տիպի վարակ, ռոտավիրուսային, մենինգակոկային, պնևմոկոկային և մարդու պապիլոմավիրուսային վարակներ, տուլարեմիա, սեզոնային գրիպ, որոնք ներառված են պատվաստումների ազգային օրացույցում:


Հայաստանում չեն արձանագրվում պատվաստումներով կանխարգելվող մի շարք հիվանդություններ՝ դիֆթերիա, պոլիոմիելիտ, փայտացում, նորածնային փայտացում, իսկ կապույտ հազը և համաճարակային պարոտիտն արձանագրվում են եզակի դեպքերի տեսքով: Խոշոր նվաճումներից են կարմրուկի և կարմրախտի տեղական դեպքերի բացակայությունը և Հայաստանի տարածքը «պոլիոմիելիտից ազատ» կարգավիճակի պահպանումը:

Կառավարելի վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության համակարգում կարևոր է հիվանդացության ցուցանիշը և վերջինիս միտումների գնահատումը: Պոլիոմիելիտի համաճարակաբանական հսկողության համար կարևոր նշանակություն ունի սուր թորշոմած կաթվածահարության /ՍԹԿ/ դեպքերի հիվանդացությունը՝ բարձր ցուցանիշի առկայությունը վկայում է պոլիոմիելիտի համաճարակաբանական հսկողության արդյունավետ գործադրման մասին:

Ստորև ներկայացվում է առանձին կառավարելի վարակիչ հիվանդությունների շարժընթացը՝ ըստ տարիների:

2005-2017թթ. արձանագրված դիֆթերիայի և փայտացման դեպքերը


Տարեթիվ	Դիֆթերիա		Փայտացում	
	Ընդամենը	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով	Ընդամենը	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով
2017	0	0	0	0
2016	0	0	1	0.03
2015	0	0	0	0
2014	0	0	1	0.03
2013	0	0	1	0.03
2012	0	0	0	0
2011	0	0	0	0
2010	0	0	2	0.06
2009	1	0.03	0	0
2008	0	0	0	0
2007	0	0	1	0.03
2006	0	0	2	0.06
2005	0	0	2	0.06



Պատկեր 1: ՀՀ-ում փայտացման, դիֆթերիայի հիվանդացության շարժընթացը, 2000-2017 թթ. (100 հազ բնակչի հաշվարկով)

2005-2017թթ. արձանագրված կարմրուկի, կարմրախտի և խոզուկի դեպքերը


Տարեթիվ	Կարմրուկ		Կարմրախտ		Խոզուկ	
	Ընդամենը	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով	Ընդամենը	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով	Ընդամենը	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով
2017	1	0.03	0	0	8	0.27
2016	2	0.1	0	0	2	0.1
2015	33	1.1	0	0	4	0.1
2014	13	0.4	0	0	2	0.07
2013	11	0.3	4	0.1	2	0.1
2012	0	0	1	0.03	6	0.2
2011	0	0	0	0	15	0.5
2010	2	0.1	0	0	23	1.2
2009	0	0	4	0.1	71	2.2
2008	0	0	4	0.1	98	3
2007	7	0.3	598	18	133	4.2
2006	137	4.6	13801	428.9	128	4
2005	2281	71.3	620	19.3	167	5.2
2004	1783	55.5	733	22.8	504	15.7



Գծապատկեր 2: ՀՀ-ում կարմրուկի, կարմրախտի, խոզուկի հիվանդացության շարժընթացը 2000-2017թթ. (100 հազ բնակչի հաշվարկով):

2005-2017թթ. արձանագրված կապույտ հազի դեպքերը


Տարեթիվ	Ընդամենը	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով	0-14 տարեկան	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով
2017	77	2.56	77	13.5
2016	15	0.5	14	2.4
2015	27	0.9	27	4.7
2014	85	2.8	84	14.7
2013	30	1	29	5.1
2012	8	0.2	8	1.4
2011	1	0	1	0.2
2010	4	0.1	4	0.7
2009	11	0.3	11	1.8
2008	3	0.1	3	0.5
2007	1	0	1	0.2
2006	3	0.1	3	0.4
2005	6	0.2	6	0.8




Գծապատկեր 3. 2005-2017թթ. կապույտ հազի հիվանդացության շարժընթացը (100 հազ բնակչի հաշվարկով):

2005-2017թթ արձանագրված ՍԹԿ-ի դեպքերը


Տարեթիվ	ընդամենը	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով	0-14 տարեկան	Հիվանդացության ցուցանիշը՝ 100 հզր բնակչի հաշվարկով
2017	12	0.4	12	2.0
2016	20	0.7	20	3.35
2015	17	0.6	17	2.9
2014	23	0.8	23	4.0
2013	22	0.7	22	3.9
2012	29	0.9	29	4.9
2011	20	0.6	20	3.5
2010	13	0.4	13	2.2
2009	9	0.3	9	1.5
2008	18	0.6	18	2.9
2007	15	0.5	15	2.3
2006	8	0.2	8	1.2
2005	10	0.3	9	1.3



Գծապատկեր 4. ՀՀ-ում ՍԹԿ հիվանդացության շարժընթացը 2005-2017 թթ. (մինչև 15 տարեկան 100 հազ բնակչի հաշվարկով)



Գծապատկեր 5. Համաճարակային պարոտիտի հիվանդացության շարժընթացը 2005-2017 թվականներին (100 հազ բնակչի հաշվարկով)




Գծապատկեր 6. Մանրէային մենինգիտների շարժընթացը, 2012- 2017թթ.


Գծապատկերից երևում է, որ մինչև 5 տարեկան երեխաների շրջանում *H. Influenzae*-ով և *S. Pneumoniae*-ով պայմանավորված մենինգիտները 2015 թվականին նվազել են համապատասխանաբար 4 և 6 անգամ, իսկ *N.meningitidis*-ով պայմանավորված մենինգիտները աճել են 2.7 անգամ: 2016 թվականին դիտվել է *S. Pneumoniae*-ով պայմանավորված մենինգիտների աճ: Սակայն կարևոր է նշել, որ այդ դեպքերը գրանցվել են միայն չպատվաստված կամ թերի պատվաստված /ստացել են 1 դեղաչափ/ երեխաների մոտ, իսկ թերի պատվաստված պնևմակոկային մենինգիտները պայմանավորված էին *S.pneumoniae* -6A/6B և *S.pneumoniae* 31 շճատիպերով, որոնք չեն մտնում պնևմակոկային պատվաստանյութի բաղադրության մեջ:

2009-2017թթ արձանագրված ռոտավիրուսային վարակի լաբորատոր հաստատված դեպքերը /դետքային համաճարակաբանական հսկողության տվյալներ/

Տարեթիվ	ընդամենը
2017	113
2016	136
2015	300
2014	316
2013	462
2012	774
2011	650
2010	574
2009	323



Գծապատկեր 7: Ռոտավիրուսային վարակի դետքային համաճարակաբանական հսկողության տվյալներն ըստ տարիների, 2009-2017թթ.:



Գծապատկեր 8: Ռոտավիրուսային դիարեաների սեզոնային շարժընթաց, 2009-2017թթ.: